3-5 մակարդակների դեղամիջոցներ (ներառյալ՝ ապրանքանիշային և մասնագիտացված դեղամիջոցները) Ցանցային կամ փոստային առաքմամբ դեղատանը տրամադրվող 3–5-րդ մակարդակների դեղամիջոցերի մեկամսյա պաշարի արժեքը	Ձեր համավճարը մեկ ամսվա (30 օրվա մատակարարում) համար կազմում է **$0–$12.65 մեկ դեղատոմսի համար**՝ կախված ձեր «Extra Help»-ի մակարդակից: Ձեր համավճարը մեկ ամսվա (30 օրյա) մատակարարման յուրաքանչյուր ապահովագրված ինսուլինի արտադրանքի համար կազմում է **$0–$12.65 մեկ դեղատոմսի համար**՝ կախված ձեր «Extra Help»-ի մակարդակից: Ձեր համավճարը մեկ ամսվա (30 օրվա փոստային պատվերի դեղատոմսի) համար կազմում է **$0–$12.65 մեկ դեղատոմսի համար**՝ կախված ձեր «Extra Help»-ի մակարդակից:	Ձեր համավճարը մեկ ամսվա (30 օրվա մատակարարում) համար կազմում է **$0–$14.40 մեկ դեղատոմսի համար**՝ կախված ձեր «Extra Help»-ի մակարդակից: Ձեր համավճարը մեկ ամսվա (30 օրյա) մատակարարման յուրաքանչյուր ապահովագրված ինսուլինի արտադրանքի համար կազմում է **$0–$14.40 մեկ դեղատոմսի համար**՝ կախված ձեր «Extra Help»-ի մակարդակից: Ձեր համավճարը մեկ ամսվա (30 օրվա փոստային պատվերի դեղատոմսի) համար կազմում է **$0–$14.40 մեկ դեղատոմսի համար**՝ կախված ձեր «Extra Help»-ի մակարդակից:
6-րդ մակարդակի դեղեր (ներառում է Մաս D-ի պատվաստանյութեր)	Դուք վճարում եք **$0**:	Դուք վճարում եք **$0**:

Սկզբնական փոխհատուցման փուլն ավարտվում է այն ժամանակ, երբ դեղատոմսով բաց թողնվող դեղերի՝ ձեր գրպանից վճարվող ընդհանուր ծախսերը հասնում են **$2,400:** Այդ պահից սկսվում է Կրիտիկական փոխհատուցման փուլը: Պլանը փոխհատուցում է ձեր դեղերի բոլոր ծախսերը այդ պահից սկսած մինչև տարվա վերջ: Ուսումնասիրեք *Անդամի ձեռնարկի* **6-րդ Գլուխը**՝ ձեր դեղամիջոցերի համար վճարվելիք չափի վերաբերյալ ավելի շատ տեղեկություններ ստանալու համար:

Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն 1-800-443-0815 հեռախոսահամարով (TTY՝ 711), շաբաթական 7 օր, առավոտյան 08:00-ից մինչև երեկոյան 20:00: Զանգն անվճար է: **Ավելի շատ տեղեկությունների համար** այցելեք kp.org/medicare (Անգլերեն) կայքը:

D4. Փուլ 2. «Կրիտիկական փոխհատուցման փուլ»

Երբ դեղերի համար ձեր գրպանից վճարվող ծախսերի սահմանաչափը հասնում է **$2,400**-ի, սկսվում է Կրիտիկական փոխհատուցման փուլը և դուք ոչինչ չեք վճարում ձեր ապահովագրված դեղերի համար: Դուք մնում եք Կրիտիկական փոխհատուցման փուլում մինչև օրացույցային տարվա վերջը:

Կրիտիկական փոխհատուցման փուլում ձեր ծախսերի մասին լրացուցիչ տեղեկությունների համար ընթերցեք Անդամի ձեռնարկի **6-րդ Գլուխը**, ձեր *Անդամի ձեռնարկի* **E բաժնում**:

E. Պլանի ընտրությունը

E1. Մեր պլանում մնալը

Մենք հույս ունենք, որ դուք կմնաք որպես մեր պլանի անդամ: Մեր ծրագրում մնալու համար ձեզնից ոչինչ չի պահանջվում: Եթե դուք չեք գրանցվել Medicare-ի մեկ այլ պլանի կամ Original Medicare պլանի համար, ապա ավտոմատ կերպով շարունակում եք մնալ մեր պլանի անդամը նաև 2027 թվականին:

E2. Պլանի փոփոխում

Medicare պլանում գրանցված մարդկանց մեծամասնությունը կարող է դադարեցնել իրենց անդամակցությունը տարվա որոշակի ժամանակահատվածում:

Բացի այդ, դուք կարող եք դադարեցնել ձեր անդամակցությունը մեր պլանին հետևյալ ժամանակահատվածներում.

- **Բաց գրանցման ժամանակահատվածը**, որը տևում է հոկտեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 7-ը: Եթե այս ժամանակահատվածում ընտրեք նոր պլան, ապա ձեր անդամակցությունը մեր պլանին կավարտվի դեկտեմբերի 31-ին, իսկ նոր պլանին անդամակցությունը կսկսվի հունվարի 1-ից: ,
- **Medicare Advantage (MA)-ի բաց գրանցման ժամանակահատվածը**, որը տևում է հունվարի 1-ից մինչև մարտի 31-ը: Այս ժամանակահատվածում նոր ապահովագրական պլան ընտրելու դեպքում, ձեր անդամակցությունը դրան կսկսվի հաջորդ ամսվա առաջին օրը:
- Քանի որ Դուք ունեք Medi-Cal-ի ծածկույթ, մեր պլանում ձեր անդամակցությունը դադարեցնելու մի քանի տարբերակ ունեք, այդ թվում՝ տարվա ցանկացած ամսվա ընթացքում:

Կարող են լինել այլ իրավիճակներ, երբ դուք իրավունք կունենաք փոփոխություն կատարելու ձեր գրանցման հետ կապված: Օրինակ, երբ

Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն 1-800-443-0815 հեռախոսահամարով (TTY՝ 711), շաբաթական 7 օր, առավոտյան 08:00-ից մինչև երեկոյան 20:00: Զանգն անվճար է: **Ավելի շատ տեղեկությունների համար** այցելեք kp.org/medicare (Անգլերեն) կայքը:

- տեղափոխվեք մեր սպասարկման տարածքից,
- Medi-Cal-ի կամ Extra Help-ի ծառայությունները փոխվեն **կամ**
- դուք վերջերս եք տեղափոխվել, ներկայումս խնամք եք ստանում որևէ հաստատությունում (օրինակ՝ մասնագիտացված խնամքի կենտրոնում կամ երկարատև խնամքի հիվանդանոցում): Եթե դուք վերջերս եք տեղափոխվել հաստատությունից, դուք կարող եք փոխել պլանները կամ տեղափոխվել Original Medicare պլան, տեղափոխման ամսվանից երկու ամբողջ ամիս հետո: ,

Medicare-ի ձեր ծառայությունները

Դուք ունեք երեք տարբերակ՝ ստորև նշված Medicare-ի ծառայությունները տարվա ցանկացած ամսին ստանալու համար: Դուք ունեք լրացուցիչ տարբերակ, որը թվարկված է ստորև տարվա որոշակի ժամանակահատվածներում, ներառյալ՝ **Բաց գրանցման ժամանակահատվածը** և **Medicare Advantage-ի Բաց գրանցման ժամանակահատվածը** կամ այլ իրավիճակներ, որոնք նկարագրված են **E2 Բաժնում**: Ընտրելով այս տարբերակներից մեկը՝ դուք ավտոմատ կերպով դադարեցնում եք ձեր անդամակցությունը մեր ծրագրին:

1. Դուք կարող եք փոխել ձեր ծրագիրը հետևյալով՝ **Medi-Medi պլանը Medicare Advantage պլանի տեսակ է: Այն նախատեսված է այն մարդկանց համար, որոնք ունեն և՛ Medicare, և՛ Medi-Cal, և միավորում է Medicare-ի և Medi-Cal-ի արտոնությունները մեկ պլանի մեջ: Medi-Medi պլանները համակարգում են երկու ծրագրերի բոլոր արտոնություններն ու ծառայությունները՝ ներառյալ Medicare-ի և Medi-Cal-ի կողմից ապահովագրված բոլոր ծառայությունները կամ տարեցների համար նախատեսված համալիր խնամքի պլանը (Program of All-inclusive Care, PACE), եթե դուք համապատասխանում եք պահանջներին:** **Նշում՝** Medi-Medi պլան տերմինը Կալիֆոռնիայում ինտեգրված երկակի իրավասու հատուկ կարիքների ծրագրերի (D-SNP) անվանումն է:	**Ինչ է պետք անել դրա համար՝** Զանգահարեք Medicare հետևյալ հեռախոսահամարով՝ 1-800-MEDICARE (1-800-633-4227): TTY-ից օգտվողները պետք է զանգահարեն 1-877-486-2048: Տարեցների համապարփակ խնամքի ծրագրի (PACE) հետ կապված հարցերով զանգահարեք 1-855-921-PACE (7223): Եթե ձեզ հարկավոր է օգնություն կամ լրացուցիչ տեղեկություններ՝ • Զանգահարեք Կալիֆոռնիայի Բժշկական ապահովագրության խորհրդատվության և շահերի պաշտպանության պլան (Health Insurance Counseling and Advocacy Program, HICAP)՝ 1-800-434-0222 հեռախոսահամարով, երկուշաբթիից ուրբաթ, առավոտյան ժամը 08:00-ից մինչև երեկոյան 17:00 (TTY՝ 711): Լրացուցիչ տեղեկությունների կամ ձեր տարածաշրջանում HICAP-ի գրասենյակ գտնելու համար այցելեք www.aging.ca.gov/Programs_and_Services/Medicare_Counseling/: **ԿԱՄ** Գրանցվեք Medi-Medi նոր պլանում: Երբ ձեր նոր պլանի ապահովագրությունը սկսվի, դուք ավտոմատ կերպով դուրս կգաք մեր պլանից: Ձեր Medi-Cal պլանը կփոխվի՝ ձեր Medi-Medi պլանին համապատասխանելու համար:

Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն 1-800-443-0815 հեռախոսահամարով (TTY՝ 711), շաբաթական 7 օր, առավոտյան 08:00-ից մինչև երեկոյան 20:00: Զանգն անվճար է: **Ավելի շատ տեղեկությունների համար** այցելեք kp.org/medicare (Անգլերեն) կայքը:

2. Դուք կարող եք փոխել ձեր ծրագիրը հետևյալով՝ **Original Medicare՝ Medicare-ի դեղերի առանձին պլանով**	**Ինչ է պետք անել դրա համար՝** Զանգահարեք Medicare հետևյալ հեռախոսահամարով՝ 1-800-MEDICARE (1-800-633-4227): TTY-ից օգտվողները պետք է զանգահարեն 1-877-486-2048: Եթե ձեզ հարկավոր է օգնություն կամ լրացուցիչ տեղեկություններ՝ • Զանգահարեք Կալիֆոռնիայի Բժշկական ապահովագրության խորհրդատվության և շահերի պաշտպանության պլան (HICAP)՝ 1-800-434-0222 հեռախոսահամարով, երկուշաբթիից ուրբաթ, առավոտյան ժամը 08:00-ից մինչև երեկոյան 17:00 (TTY՝ 711)։ Լրացուցիչ տեղեկությունների կամ ձեր տարածաշրջանում HICAP-ի գրասենյակ գտնելու համար այցելեք www.aging.ca.gov/Programs_and_Services/Medicare_Counseling/: **ԿԱՄ** Գրանցվեք Medicare-ի դեղատոմսային դեղերի նոր պլանում: Դուք ավտոմատ կերպով դուրս կգաք մեր պլանից, երբ սկսվի ձեր Original Medicare-ի ապահովագրությունը։ Ձեր Medi-Cal պլանը չի փոխվի, եթե դուք չդիմեք փոփոխության համար:

Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն 1-800-443-0815 հեռախոսահամարով (TTY՝ 711), շաբաթական 7 օր, առավոտյան 08:00-ից մինչև երեկոյան 20:00: Զանգն անվճար է: **Ավելի շատ տեղեկությունների համար** այցելեք kp.org/medicare (Անգլերեն) կայքը:

3. Դուք կարող եք փոխել ձեր ծրագիրը հետևյալով՝ **Original Medicare՝ առանց առանձին Medicare-ի դեղերի ծրագրի, եթե ունեք անդամակցությունը դադարեցնելու վավեր պատճառ:** **ՆՇՈՒՄ՝** Եթե դուք անցնում եք Original Medicare-ին և չեք գրանցվում Medicare-ի դեղերի առանձին պլանում, Medicare-ը կարող է գրանցել ձեզ դեղերի պլանի մեջ, եթե դուք Medicare-ին չհայտնեք, որ չեք ցանկանում միանալ: Դուք պետք է հրաժարվեք դեղերի ապահովագրական ծածկույթից միայն այն դեպքում, եթե դեղերի ապահովագրական ծածկույթ ունեք այլ աղբյուրից, օրինակ՝ գործատուից կամ արհմիությունից: Եթե ցանկանում եք տեղեկանալ՝ ձեզ հասնում է դեղերի ապահովագրական ծածկույթ, թե ոչ, զանգահարեք Կալիֆոռնիայի Բժշկական ապահովագրության խորհրդատվության և շահերի պաշտպանության ծրագիր (HICAP)՝ 1-800-434-0222 հեռախոսահամարով, երկուշաբթիից ուրբաթ, առավոտյան ժամը 08:00-ից մինչև երեկոյան 17:00: Լրացուցիչ տեղեկությունների կամ ձեր տարածաշրջանում HICAP-ի գրասենյակ գտնելու համար այցելեք www.aging.ca.gov/Programs_and_Services/Medicare_Counseling/:	**Ինչ է պետք անել դրա համար՝** Զանգահարեք Medicare հետևյալ հեռախոսահամարով՝ 1-800-MEDICARE (1-800-633-4227): TTY-ից օգտվողները պետք է զանգահարեն 1-877-486-2048: Եթե ձեզ հարկավոր է օգնություն կամ լրացուցիչ տեղեկություններ՝ • Զանգահարեք Կալիֆոռնիայի Բժշկական ապահովագրության խորհրդատվության և շահերի պաշտպանության պլան (HICAP)՝ 1-800-434-0222 հեռախոսահամարով, երկուշաբթիից ուրբաթ, առավոտյան ժամը 08:00-ից մինչև երեկոյան 17:00 (TTY՝ 711): Լրացուցիչ տեղեկությունների կամ ձեր տարածաշրջանում HICAP-ի գրասենյակ գտնելու համար այցելեք www.aging.ca.gov/Programs_and_Services/Medicare_Counseling/: Դուք ավտոմատ կերպով դուրս կգաք մեր պլանից, երբ սկսվի ձեր Original Medicare-ի ապահովագրությունը: Ձեր Medi-Cal պլանը չի փոխվի, եթե դուք չդիմեք փոփոխության համար:

Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն 1-800-443-0815 հեռախոսահամարով (TTY՝ 711), շաբաթական 7 օր, առավոտյան 08:00-ից մինչև երեկոյան 20:00: Զանգն անվճար է: **Ավելի շատ տեղեկությունների համար** այցելեք kp.org/medicare (Անգլերեն) կայքը:

4. Դուք կարող եք փոխել ձեր ծրագիրը հետևյալով՝ **Medicare-ի ցանկացած առողջապահական պլան** տարվա որոշակի ժամանակահատվածում, ներառյալ **Բաց գրանցման ժամանակահատվածը** և **Medicare Advantage-ի Բաց գրանցման ժամանակահատվածը** կամ **E բաժնում** նկարագրված այլ իրավիճակներ:	**Ինչ է պետք անել դրա համար՝** Զանգահարեք Medicare հետևյալ հեռախոսահամարով՝ 1-800-MEDICARE (1-800-633-4227): TTY-ից օգտվողները պետք է զանգահարեն 1-877-486-2048: Տարեցների համապարփակ խնամքի ծրագրի (PACE) հետ կապված հարցերով զանգահարեք 1-855-921-PACE (7223): Եթե ձեզ հարկավոր է օգնություն կամ լրացուցիչ տեղեկություններ՝ • Զանգահարեք Կալիֆոռնիայի Բժշկական ապահովագրության խորհրդատվության և շահերի պաշտպանության պլան (HICAP)՝ 1-800-434-0222 հեռախոսահամարով, երկուշաբթիից ուրբաթ, առավոտյան ժամը 08:00-ից մինչև երեկոյան 17:00 (TTY՝ 711): Լրացուցիչ տեղեկությունների կամ ձեր տարածաշրջանում HICAP-ի գրասենյակ գտնելու համար այցելեք www.aging.ca.gov/Programs_and_Services/Medicare_Counseling/: **ԿԱՄ** Գրանցվեք Medicare-ի նոր պլանում: Դուք ավտոմատ կերպով դուրս կգաք Medicare-ի մեր պլանից, երբ սկսվի ձեր նոր պլանի ապահովագրությունը: Ձեր Medi-Cal պլանը կարող է փոխվել:

Medi-Cal-ի ծառայությունները

Եթե ցանկանում եք տեղեկանալ, թե ինչպես ընտրել Medi-Cal-ի պլան կամ ստանալ Medi-Cal-ի ծառայություններ մեր պլանից դուրս գալուս հետո, կապ հաստատեք Առողջապահական խնամքի տարբերակների գրասենյակի հետ՝ 1-800-430-4263 հեռախոսահամարով, երկուշաբթիից ուրբաթ, առավոտյան ժամը 08:00-ից մինչև երեկոյան ժամը 18:00: TTY-ից օգտվողները պետք է զանգահարեն 1-800-430-7077 հեռախոսահամարով: Հարցրեք, թե ինչպես է մեկ այլ պլանին միանալը կամ Original Medicare պլանին վերադարձը ազդում ձեր Medi-Cal-ի ապահովագրական ծածկույթի վրա:

F. Աջակցության տրամադրում

F1. Մեր պլանը

Մենք սիրով կօգնենք ձեզ, եթե հարցեր ունենաք: Զանգահարեք Անդամների սպասարկման կենտրոն՝ էջի ներքևում նշված հեռախոսահամարներով նշված աշխատանքային օրերին և ժամերին: Այս զանգերն անվճար են:

Կարդացեք ձեր *Անդամի ձեռնարկը*

Ձեր *Անդամի ձեռնարկն* օրինական փաստաթուղթ է, որտեղ տրված է մեր պլանի նպաստների մանրամասն նկարագրությունը: Այնտեղ ներկայացված են մանրամասներ 2027 թ.-ի մեր նպաստների և ծախսերի մասին: Այն բացատրում է Ձեր իրավունքները և այն կանոնները, որոնց պետք է հետևեք՝ մեր կողմից ծածկվող ծառայություններն ու դեղերը ստանալու համար:

2027 թվականի *Անդամի ձեռնարկը* հասանելի կլինի մինչև հոկտեմբերի 15-ը: *Անդամի ձեռնարկի* արդի տարբերակը հասանելի է մեր կայքում՝ kp.org/eocscal (Անգլերեն) հասցեով: Դուք կարող եք նաև զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն՝ էջի ներքևում նշված հեռախոսահամարներով, որպեսզի 2027 թվականի *Անդամի ձեռնարկը* ձեզ փոստով ուղարկելու հարցում ուղարկեք:

Մեր կայքէջը

Դուք կարող եք այցելել մեր կայքէջը՝ kp.org (Անգլերեն): Հիշեցնենք, որ մեր կայքում ներկայացված է ամենաթարմ տեղեկատվությունը մեր մատակարարների և դեղատների ցանցի (*մատակարարների և դեղատների տեղեկատու*), ինչպես նաև *Դեղերի ցանկի* մասին (*Փոխհատուցվող դեղերի ցանկ*):

F2. Բժշկական ապահովագրության խորհրդատվության և շահերի պաշտպանության ծրագիր (HICAP)

Դուք կարող եք նաև զանգահարել Նահանգային բժշկական ապահովագրության աջակցության ծրագիր (State Health Insurance Assistance Program, SHIP): Կալիֆոռնիայում SHIP ծրագիրը կոչվում է Բժշկական ապահովագրության խորհրդատվության և շահերի պաշտպանության ծրագիր (HICAP): HICAP-ի խորհրդատուները կարող են օգնել ձեզ պլանի ընտրության հարցում և պատասխանել պլանը փոխելու հետ կապված հարցերին: HICAP-ը կապ չունի մեզ հետ կամ որևէ

Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն 1-800-443-0815 հեռախոսահամարով (TTY՝ 711), շաբաթական 7 օր, առավոտյան 08:00-ից մինչև երեկոյան 20:00: Զանգն անվճար է: **Ավելի շատ տեղեկությունների համար** այցելեք kp.org/medicare (Անգլերեն) կայքը:

ապահովագրական ընկերության կամ առողջապահական պլանի հետ: HICAP-ն ունի վերապատրաստված խորհրդատուներ յուրաքանչյուր վարչաշրջանում, իսկ ծառայություններն անվճար են: HICAP-ի հեռախոսահամարն է 1-800-434-0222: (TTY՝ 711): Լրացուցիչ տեղեկությունների կամ ձեր տարածաշրջանում HICAP-ի գրասենյակ գտնելու համար այցելեք www.aging.ca.gov/Programs_and_Services/Medicare_Counseling/:

F3. Ombudsman Program

Medicare Medi-Cal-ի Օմբուդսմենի ծրագիրը կարող է օգնել ձեզ, եթե մեր պլանի հետ կապված խնդիր ունեք: Օմբուդսմենի ծառայություններն անվճար են և հասանելի բոլոր լեզուներով: Medicare Medi-Cal-ի Օմբուդսմենի ծրագիր.

- կարող են պատասխանել ձեր հարցերին, եթե խնդիր կամ բողոք ունեք, և կարող են ձեզ ուղղորդել, թե ինչ անել:
- ապահովում է իրազեկվածություն ձեր իրավունքների և պաշտպանության մասին և, թե ինչպես կարող եք լուծել ձեր խնդիրները:
- կապված չէ մեզ հետ կամ որևէ ապահովագրական ընկերության կամ առողջապահական պլանի հետ: Medicare Medi-Cal-ի Օմբուդսմենի ծրագրի հեռախոսահամարն է 1-855-501-3077:

F4. Medicare

Անմիջապես Medicare-ից տեսեկություններ ստանալու համար՝

- Զանգահարելով՝ 1-800-MEDICARE (1-800-633-4227) հեռախոսահամարով՝ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: TTY-ից օգտվողները պետք է զանգահարեն 1-877-486-2048: ,
- գրեք ուղիղ զրույցի միջոցով՝ www.Medicare.gov/talk-to-someone
- գրեք Medicare-ին հետևյալ հասցեով՝ PO Box 1270, Lawrence, KS 66044:

Medicare-ի վեբկայք

Դուք կարող եք այցելել Medicare-ի վեբկայքը (www.medicare.gov): Եթե որոշեք դուրս գալ մեր պլանից և գրանցվել Medicare-ի մեկ այլ ծրագրում, Medicare-ի կայքում կգտնեք տեղեկություններ ծախսերի, ապահովագրական ծածկույթի մասին, ինչպես նաև կտեսնեք ծառայության որակի գնահատականները, որոնք կօգնեն ձեզ համեմատել պլանները:

Դուք կարող եք տեղեկություններ գտնել ձեր տարածաշրջանում հասանելի Medicare-ի պլանների մասին՝ Medicare Plan Finder-ի (Ծրագրերի պլանների որոնման գործիք) օգնությամբ Medicare-ի վեբկայքում: (Պլանների մասին տեղեկությունների համար անցեք www.medicare.gov և սեղմեք «Find plans» [Գտնել պլաններ]:

Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն 1-800-443-0815 հեռախոսահամարով (TTY՝ 711), շաբաթական 7 օր, առավոտյան 08:00-ից մինչև երեկոյան 20:00: Զանգն անվճար է: **Ավելի շատ տեղեկությունների համար** այցելեք kp.org/medicare (Անգլերեն) կայքը:

Medicare-ը և դուք, 2027 թ.

Դուք կարող եք կարդալ *Medicare-ը և դուք, 2027 թ. (Medicare & You 2027)* ձեռնարկը: Ամեն տարի աշնանը այս բուկլետը փոստով ուղարկվում է Medicare-ի ծրագրում գրանցված անձանց: Այնտեղ կգտնեք Medicare-ի նպաստների, իրավունքների և պաշտպանությունների մասին հակիրճ նկարագրությունը, ինչպես նաև Medicare-ի հետ կապված ամենահաճախ տրվող հարցերի պատասխանները: Այս ձեռնարկը հասանելի է նաև իսպաներեն, չինարեն և վիետնամերեն:

Եթե դուք չունեք այս գրքույկի օրինակը, կարող եք այն ստանալ Medicare կայքում (www.medicare.gov/Pubs/pdf/10050-medicare-and-you.pdf) կամ զանգահարելով 1-800-MEDICARE (1-800-633-4227) հեռախոսահամարով: TTY-ից օգտվողները պետք է զանգահարեն 1-877-486-2048:

F5. Կալիֆոռնիայի կառավարվող բուժխնամքի վարչություն

Կալիֆոռնիայի Կառավարվող բուժխնամքի վարչությունը պատասխանատու է բուժխնամքի ծառայության ծրագրերի կարգավորման համար: Եթե ձեր առողջապահական պլանի հետ կապված բողոքներ ունեք, ապա նախ պետք է զանգահարեք ձեր առողջապահական պլան՝ **1-800-443-0815** հեռախոսահամարով և հետևեք ձեր առողջապահական պլանի բողոքարկման ընթացակարգին՝ նախքան բաժնին դիմելը: Բողոքների քննման այս ընթացակարգի կիրառումը Ձեզ չի զրկում որևէ հնարավոր իրավական իրավունքներից կամ պաշտպանության միջոցներից, որոնք կարող են հասանելի լինել Ձեզ: Եթե Ձեզ անհրաժեշտ է օգնություն արտակարգ իրավիճակի հետ կապված բողոքի լուծման, բողոքի, որը Ձեր առողջապահական պլանի կողմից բավարար կերպով չի կարգավորվել, կամ բողոքի, որը մնում է չլուծված ավելի քան 30 օր, կարող եք օգնության համար դիմել վարչություն: Դուք կարող եք իրավունք ունենալ նաև անկախ բժշկական վերանայման (Independent Medical Review, IMR): Եթե Դուք IMR-ի իրավունք ունեք, ապա IMR-ի շրջանակներում կանցկացվի առողջապահական պլանի կողմից կայացված բժշկական որոշումների անաչառ ստուգում՝ կապված առաջարկվող ծառայության կամ բուժման բժշկական անհրաժեշտության, փորձարարական կամ հետազոտական բուժման ծախսերը հոգալու վերաբերյալ որոշումների, ինչպես նաև անհետաձգելի կամ շտապ բժշկական օգնության վճարումների շուրջ վեճերի հետ: Բաժանմունքն ունի նաև անվճար հեռախոսահամար (**1-888-466-2219**) և TDD գիծ (**1-877-688-9891**) լսողության և խոսքի խանգարում ունեցողների համար: Բաժանմունքի **www.dmhc.ca.gov** ինտերնետային վեբկայքում կգտնեք առցանց բողոքի ձևեր, IMR դիմումաձևեր և հրահանգներ:

Լրացուցիչ տեղեկությունների համար ընթերցեք *Անդամի ձեռնարկի* **9-րդ Գլխի F4 բաժինը**:

Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն 1-800-443-0815 հեռախոսահամարով (TTY՝ 711), շաբաթական 7 օր, առավոտյան 08:00-ից մինչև երեկոյան 20:00: Զանգն անվճար է: **Ավելի շատ տեղեկությունների համար** այցելեք kp.org/medicare (Անգլերեն) կայքը:

F6. Medicare Prescription Payment Plan

Medicare Prescription Payment Plan-ը վճարման տարբերակ է, որը կարող է օգնել ձեզ կառավարել մեր ծրագրով ապահովագրված դեղերի համար ձեր գրպանից կատարվող ծախսերը՝ դրանք բաշխելով օրացուցային տարվա ընթացքում (հունվար-դեկտեմբեր) որպես ամսական վճարումներ: Medicare դեղամիջոցների պլանի կամ դեղամիջոցների հատուցումով Medicare առողջապահական ծրագրի (ինչպես, օրինակ, Medicare Advantage պլանը-ը՝ դեղերի ծածկույթով) ցանկացած անձ կարող է օգտվել վճարման այս տարբերակից: Եթե դուք մասնակցում եք Medicare-ի դեղատոմսով դեղերի վճարման ծրագրին և շարունակում եք մնալ նույն Մաս D պլանում, ապա 2027 թվականին ձեր մասնակցությունը շարունակելու համար որևէ գործողություն ձեռնարկելու կարիք չունեք: Վճարման այս տարբերակը կարող է օգնել ձեզ կառավարել ձեր ծախսերը, բայց դա չի խնայում ձեր գումարը և չի նվազեցնում ձեր դեղերի ծախսերը:

«Extra Help»-ը Medicare-ից և ձեր նահանգի դեղագործական աջակցության ծրագրի (state pharmaceutical assistance program, SPAP) և ՁԻԱՀ-ի դեղերի աջակցության ծրագրի (AIDS Drug Assistance Program, ADAP) օգնությունն է նրանց համար, ովքեր իրավասու են, այն ավելի շատ նպաստներ է տրամադրում, քան միայն Medicare Prescription Payment Plan-ը: Այս ծրագրի մասին ավելին իմանալու համար խնդրում ենք կապվել մեզ հետ այս էջի ներքևում գտնվող հեռախոսահամարով կամ այցելել www.medicare.gov:

Գրավաճառության կրճատման մասին օրենք (Paperwork Reduction Act, PRA)-ի բացահայտման հայտարարություն *Համաձայն 1995 թվականի «Գրավաճառության կրճատման մասին» օրենքի՝ ոչ մի անձ պարտավոր չէ պատասխանել տեղեկատվության հավաքածուին, եթե այն չի պարունակում Կառավարման և բյուջեի գրասենյակի (Office of Management and Budget, OMB)-ի վավեր վերահսկիչ համար: Այս տեղեկատվության հավաքագրման համար գործող OMB վերահսկիչ համարը 0938-1444 է: Եթե ունեք այս ձևաթուղթը բարելավելու վերաբերյալ մեկնաբանություններ կամ առաջարկություններ, գրավոր դիմեք՝ CMS, 7500 Security Boulevard, Attn: PRA Reports Clearance Officer, Mail Stop C4-26-05, Baltimore, Maryland 21244-1850*

Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն 1-800-443-0815 հեռախոսահամարով (TTY՝ 711), շաբաթական 7 օր, առավոտյան 08:00-ից մինչև երեկոյան 20:00: Զանգն անվճար է: **Ավելի շատ տեղեկությունների համար** այցելեք kp.org/medicare (Անգլերեն) կայքը:

Առողջապահական պլանի մասին տեղեկատվություն

Որպես այս առողջապահական պլանի անդամ՝ մենք կարող ենք ժամանակ առ ժամանակ կապվել Ձեզ հետ, որպեսզի տեղեկացնենք Kaiser Permanente-ի Ձեզ հասանելի առողջապահական այլ պլանների կամ պրոդուկտների մասին: Եթե ցանկանում եք հրաժարվել այս տեսակի զանգերից, խնդրում ենք կապվել Ձեր անդամի ID քարտի հետնամասում նշված Անդամների սպասարկման հեռախոսահամարով:

Kaiser Permanente-ն այժմ առաջարկում է նոր եղանակներ, որպեսզի անվտանգ կերպով փոխանցի Ձեր առողջության մասին տեղեկությունները: Այցելեք ***kp.org/datasharing*** *կայք, որպեսզի տեղեկանաք Payer-to-Payer Application Programming Interface-ի (API) և Provider Access API-ի մասին, այդ թվում՝ ինչպես են դրանք աշխատում և ինչպես կարելի է միանալ:*

Kaiser Permanente-ի Մատակարարների տեղեկատուներ

Եթե ցանցային մատակարար կամ դեղատուն գտնելու հարցում օգնության կարիք ունեք, այցելեք **kp.org/directory** կայք, որպես որոնեք մեր առցանց տեղեկատուն (Նշում. 2027թ. -ի տեղեկատուները առցանց հասանելի կլինեն 2026 թվականի հոկտեմբերի 15-ից սկսած՝ համաձայն Medicare-ի պահանջների):

Եթե ցանկանում եք, որ տեղեկատուն Ձեզ էլփոստով ուղարկվի, զանգահարեք մեզ **1-800-443-0815** (TTY **711**) հեռախոսահամարով, շաբաթը 7 օր, առավոտյան 08:00-ից մինչև 20:00:

Kaiser Permanente Medicare Part D-ի ամբողջական դեղացանկը (ապահովագրական ծածկույթում ընդգրկված դեղերի ցանկ)

Մեր ամբողջական դեղացանկը նշում է Medicare Part D-ի ծածկույթում ընդգրկված դեղերը: Այս դեղացանկը կարող է ցանկացած ժամանակ փոփոխվել:
Մենք այդ մասին Ձեզ կտեղեկացնենք: Եթե ապահովագրական ծածկույթում ընդգրկված դեղերի վերաբերյալ ունեք հարցեր, օգտվեք մեր առցանց դեղացանկից **kp.org/seniorrx** կայքում (Նշում. 2027թ. -ի դեղացանկն առցանց հասանելի կլինի 2026 թվականի հոկտեմբերի 15-ից սկսած՝ համաձայն Medicare-ի պահանջների):

Եթե ցանկանում եք, որ տեղեկատուն Ձեզ էլփոստով ուղարկվի, զանգահարեք մեզ **1-800-443-0815** (TTY **711**) հեռախոսահամարով, շաբաթը 7 օր, առավոտյան 08:00-ից մինչև 20:00:

H0524_H8794_00044581HY_C
4383715500_CA_HY
July 2026

KAISER PERMANENTE®

Kaiser Permanente-ի Ապահովագրական ծածկույթի պայմանները (EOC)

Ձեր **Ապահովագրական ծածկույթի պայմանները (Evidence of Coverage, EOC)** բացատրում է, թե ինչպես կարելի է ստանալ մեր առողջապահական պլանում ընդգրկված բժշկական ծառայությունները և դեղերը: Այն բացատրում է Ձեր իրավունքներն ու պարտականությունները, հասանելի ծառայություններն ու դեղերը և վճարման չափը՝ որպես Kaiser Permanente-ի անդամ: Եթե Ձեր ապահովագրական ծածկույթի վերաբերյալ ունեք հարցեր, այցելեք **kp.org/eocncal** կամ **kp.org/eocscal** կայք, որ առցանց տեսնեք Ձեր **EOC-ը** (Նշում. 2027թ. -ի **EOC**-ն առցանց հասանելի կլինի 2026 թվականի հոկտեմբերի 15-ից սկսած՝ համաձայն Medicare-ի պահանջների):

Եթե ցանկանում եք, որ **EOC-ը** Ձեզ էլփոստով ուղարկվի, զանգահարեք մեզ **1-800-443-0815** (TTY **711**) հեռախոսահամարով, շաբաթը 7 օր, առավոտյան 08:00-ից մինչև 20:00:

Խտրականության բացառման ծանուցում

Այս փաստաթղթում «մենք», «մեզ» կամ «մեր» բառերը նշանակում են Kaiser Permanente (Kaiser Foundation Health Plan, Inc., Kaiser Foundation Hospitals, The Permanente Medical Group, Inc. և Southern California Medical Group): Այս ծանուցումը հասանելի է մեր կայքում՝ **kp.org** հասցեով:

Խտրականությունը հակաօրինական է: Մենք հետևում ենք քաղաքացիական իրավունքների նահանգային և դաշնային օրենքներին:

Մենք անօրինականորեն խտրականություն չենք դրսևորում, մարդկանց չենք բացառում կամ այլ կերպ նրանց չենք վերաբերվում՝ հիմնվելով նրանց տարիքի, ռասայի, էթնիկ խմբի ինքնության, մաշկի գույնի, ազգային պատկանելիության, մշակութային ծագման, նախահայրերի, կրոնի, սեռի, գենդերի, գենդերային ինքնության, գենդերային արտահայտման, սեռական կողմնորոշման, ընտանեկան կարգավիճակի, ֆիզիկական կամ մտավոր հաշմանդամության, բժշկական վիճակի, վճարման աղբյուրի, գենետիկ տեղեկատվության, քաղաքացիության, առաջնային լեզվի կամ ներգաղթյալի կարգավիճակի վրա:

Kaiser Permanente-ն ժամանակին տրամադրում է հետևյալ ծառայությունները.

- Անվճար օգնություն և ծառայություններ հաշմանդամ անձանց՝ մեզ հետ ավելի լավ հաղորդակցվելու նպատակով, ինչպես օրինակ՝
  - Որակավորված նշանների լեզվի թարգմանիչներ
  - Գրավոր տեղեկություններ այլ ձևաչափերով (բրայլ, խոշոր տառատեսակ, ձայնագրություն, հասանելի էլեկտրոնային ձևաչափեր և այլ ձևաչափեր)
- Անվճար լեզվական ծառայություններ այն անձանց, ում համար անգլերենն առաջնային լեզու չէ, ինչպես օրինակ՝
  - Որակավորված բանավոր թարգմանիչներ
  - Այլ լեզուներով գրված տեղեկություններ

Եթե այս ծառայությունների կարիքն ունեք, զանգահարեք մեր Անդամների սպասարկման բաժին ստորև ներկայացված հեռախոսահամարներով: Զանգն անվճար է: Անդամների սպասարկման բաժինը փակ է հիմնական տոն օրերին:

- Medicare, ներառյալ D-SNP՝ **1-800-443-0815** (TTY **711**), 8 a.m.-ից 8 p.m.-ը, շաբաթը 7 օր
- Medi-Cal՝ **1-855-839-7613** (TTY **711**), օրը 24 ժամ, շաբաթը 7 օր
- Մյուս բոլորը՝ **1-800-464-4000** (TTY **711**), օրը 24 ժամ, շաբաթը 7 օր

Խնդրանքի դեպքում այս փաստաթուղթը մատչելի կլինի բրայլով, խոշոր տառատեսակով, ձայնագրությամբ կամ էլեկտրոնային ձևաչափերով: Այս ձևաչափերից մեկով կամ այլ ձևաչափով պատճենը ստանալու համար խնդրում ենք զանգահարել մեր Անդամների սպասարկման բաժին և խնդրել ցանկալի ձևաչափը:

Ինչպես գանգատ ներկայացնել Kaiser Permanente-ին

Դուք կարող եք խտրականության մասին գանգատ ներկայացնել, եթե կարծում եք, որ մենք չենք տրամադրել այս ծառայությունները կամ որևէ այլ կերպ անօրինականորեն խտրականություն է դրսևորել: Կարող եք գանգատ ներկայացնել հեռախոսով, փոստով, անձամբ կամ առցանց: Մանրամասների համար խնդրում ենք կարդալ Ձեր *Ապահովագրության ապացույցը (Evidence of Coverage) կամ Ապահովագրման վկայագիրը (Certificate of Insurance)*: Կարող եք նաև զանգահարել Անդամների սպասարկման բաժին ձեզ կիրառելի տարբերակների մասին մանրամասներ ստանալու համար կամ եթե գանգատ ներկայացնելու համար օգնության կարիք ունեք: Դուք կարող եք խտրականության գանգատ ներկայացնել հետևյալ կերպ.

- **Հեռախոսով.** զանգահարեք Անդամների սպասարկման բաժին: Հեռախոսահամարները նշված են վերևում:
- **Փոստով.** ներբեռնեք ձևաթուղթը **kp.org** կայքում կամ զանգահարեք Անդամների սպասարկման բաժին և խնդրեք, որպեսզի ձևաթուղթ ուղարկեն ձեզ, որը հետո կարող եք հետ ուղարկել:
- **Անձամբ.** լրացրեք Բողոքի կամ Նպաստի հայցի/խնդրանքի ձևաթուղթն անդամների սպասարկման գրասենյակում, որը գտնվում է Ծրագրի հաստատությունում (հասցեների համար տեսեք հաստատությունների հասցեագիրքը մեր **kp.org/facilities** կայքում):
- **Առցանց.** լրացրեք առցանց ձևաթուղթը մեր **kp.org** կայքէջում:

Կարող եք նաև ուղղակիորեն դիմել Kaiser Permanente-ի Քաղաքացիական իրավունքների համակարգողներին ներքոնշյալ հասցեներով՝

Attn: Kaiser Permanente Civil Rights Coordinator
Member Relations Grievance Operations
P.O. Box 939001
San Diego CA 92193

Ինչպես գանգատ ներկայացնել Կալիֆորնիայի Առողջական խնամքի ծառայությունների բաժնի Քաղաքացիական իրավունքների գրասենյակ *(միայն Medi-Cal նպաստառուների համար)*

Կարող եք նաև քաղաքացիական իրավունքների բողոք ներկայացնել Կալիֆորնիայի Առողջական խնամքի ծառայությունների բաժնի Քաղաքացիական իրավունքների գրասենյակ գրավոր, հեռախոսով կամ էլ.փոստով.

- **Հեռախոսով.** զանգահարեք Առողջական խնամքի ծառայությունների բաժնի (Department of Health Care Services, DHCS) Քաղաքացիական իրավունքների գրասենյակ՝ **916-440-7370** (TTY **711**) հեռախոսահամարով:

- **Փոստով.** լրացրեք բողոքի ձևաթուղթը կամ նամակ ուղարկեք հետևյալ հասցեով՝

  Office of Civil Rights
  Department of Health Care Services
  P.O. Box 997413, MS 0009
  Sacramento, CA 95899-7413

  Կալիֆորնիայի Առողջական խնամքի ծառայությունների բաժնի Քաղաքացիական իրավունքների գրասենյակի Բողոքների ձևաթղթերը հասանելի են http://www.dhcs.ca.gov/Pages/Language_Access.aspx հասցեով

- **Առցանց.** Էլ.նամակ ուղարկեք CivilRights@dhcs.ca.gov հասցեով

Ինչպես գանգատ ներկայացնել ԱՄՆ Առողջապահության և հանրային ծառայությունների բաժնի Քաղաքացիական իրավունքների գրասենյակ

Դուք կարող եք խտրականության բողոք ներկայացնել ԱՄՆ Առողջապահության և հանրային ծառայությունների բաժնի Քաղաքացիական իրավունքների գրասենյակ: Կարող եք բողոք ներկայացնել հեռախոսով, գրավոր կամ առցանց.

- **Հեռախոսով.** զանգահարեք **1-800-368-1019** (TTY **711** կամ **1-800-537-7697**) հեռախոսահամարով

- **Փոստով.** լրացրեք բողոքի ձևաթուղթը կամ նամակ ուղարկեք հետևյալ հասցեով՝

  U.S. Department of Health and Human Services
  200 Independence Avenue, SW
  Room 509F, HHH Building
  Washington, D.C. 20201

  ԱՄՆ Առողջապահության և հանրային ծառայությունների բաժնի Քաղաքացիական իրավունքների գրասենյակի Բողոքների ձևաթղթերը հասանելի են https://www.hhs.gov/ocr/office/file/index.html հասցեով

- **Առցանց.** այցելեք **Քաղաքացիական իրավունքների գրասենյակի բողոքի պորտալը՝ https://ocrportal.hhs.gov/ocr/smartscreen/main.jsf** հասցեով